Արձանագրություն N 8
ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9 ծածկագրով ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26.05.2022թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Ար. Գրիգորյան
Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. Գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշման հիման վրա գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 13.05.2022թ. (հրապարակված 17.05.2022թ.) ընդունած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/69 որոշումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ուժը կորցրած ճանաչել գնահատող հանձնաժովի 11.03.2022թ. N 2-4 արձանագրության 2-րդ կետը, 16.03.2022թ. N 2-5 արձանագրությունը և 14.04.2022թ. N 4 արձանագրության 2-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0

2. Գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների և դրանց շտկման մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցվել է <<Վարարակն>> ՓԲԸ-ին՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: <<Վարարակն>> ՓԲԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել են:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0

3. Գնման ընթացակարգի շրջանակներում կազմակերպվող բանակցություններին հրավիրելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու համար՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը, ծանուցել ոչ գնային պայմանները բավարարող գնահատված **<<Վարարակն>> ՓԲԸ-ին, <<Գևորգյան և Ներսիսյան> և <<Վանի>> ՍՊԸ-ներին** առաջարկված

գների նվազեցման նպատակով կազմակերպվող բանակցությունների մասին, որը տեղի կունենա 2022 թվականի մայիսի 31-ին ժամը 15:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ հասցեում):

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Գնման ընթացակարգի շրջանակներում բանակցությունների կազմակեպման և անցկացման կարգի մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Բանակցությունների համար ներկա մասնակցի կողմից նվազագույն գին ներկայացնելու նպատակով կտրամադրվի 3 (երեք) րոպե ժամանակ, որի ընթացքում կարող են լինել գնի իջեցումներ և դրանք կարող են բարձրաձայնվել ինչպես մասնակցի, այնպես էլ, եթե փոխանցվել է հանձնաժողովի նախագահին՝ հանձնաժողովի նախագահի կողմից: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակցի կողմից նվազագույն գնային առաջարկը սահմանված ձևաչափով կփոխանցվի գնահատող հանձնաժողովի նախագահին, որը կհամարվի վերջնական: Վերջինիս կողմից դրանք կբարձրաձայնվեն, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կներկայացվեն էլեկտրոնային աղյուսակի տեսքով: Բանակցությունների արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը կհայտարարվի ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Միրզոյան

Անդամ՝ _____ Դ. Շատվերյան

_____ Ռ. Եղիազարյան

_____ Ար. Գրիգորյան

_____ Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Հարությունյան